Կառավարութեան, Անդրկ. Կոմխարհատի ու Սէյմի և Հայաստանի Խորհրդի փոփոխութիւններով ու լրացումներով:

Առաջ բերենք այստեղ մի քանի օրինակներ Հայ. Խորհրդի առաջին շրջանի օրէնքներից ու կարգադրութիւններից, որոնք որոշ գաղափար կը տան այն ժամանակուայ պայմանների մասին:

Օգոստ. 8-ին յատկացուեց 6 միլիոն բուբլի գաղթականական, պարենաւորման ու զօրքի վերակազմութեան համար:

Օգոստ. 21-ին ամբողջ Հայաստանը յայտարարուեց քոլերայի կողմից վտանգուած և Հայ. Խորհրդի բժշկա-սանիտարական մասնաժողովը վերածուեց վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառող բոլոր հիմնարկութիւնների վրա հսկող ամենաբարձր մարմնի:

Օգոստ. 29-ին հրատարակուեց օրէնք մասնաւոր սեփականութիւն կազմող զէնքի ու զինամթերքի պետականացման մասին: Այս օրէնքի շուրջ, Խորհրդում տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ. առանձնապէս Ծառացան սոց.-դեմոկրատ պատգամաւորները, որոնք համարում էին անթոյլատրելի ժողովրդի զինաթափութիւնը և պահանջում էին ժողովուրդը թողնել զինուած: Օրինագիծը ընդունուեց 15 քւէով ընդդէմ 7-ի:

Սեպտ. 11-ին յայտարարուեց բամբակի մենաւաճառ. կառավարութիւնն իր ձեռքը առաւ բամբակի առևտրի մենաշնորհը՝ որոշ գնով*) պետականացնելով երկրի ամբողջ բամբակը, որ, այն օրերին, միակ աղբիւրն էր կառավարական հասոյթի: Այս օրէնքն էլ կրքերի սաստիկ գրգռում առաջ բերեց Խորհրդի նիստերում և առատ նիւթ մատակարարեց կառավարութեան քննադատութեան համար:

Նոյն սեպտ. 11-ին հաստատուեց դպրոցական օրէնքը, որով «իւրաքանչիւր հասարակական կամ համայնական կազմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ինչպէս և առանձին անհատ, իրաւունք ունէին անարգել դպրոց բանալու և անկախօրէն վարելու սեփական միջոցներով»: Պետութեան վերապահուում էր ընդհանուր հակակշիռը:

Սեպտ. 28-ին ընդունուեց կարիք ունեցող գաղթականներին հող և աշխատանք հայթայթելու օրէնքը. կառավարութիւնը պարտաւոր էր ապրուստի միջոց չունեցող գաղթականներին տալ աշխատանք կամ հող կամ, հակառակ պարագային, բաց թողնել պետական նպաստ:

Հոկտ. 8-ին որոշուեց. կարիքաւոր գաղթականների, առաւելապէս կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ՝ առաջին հերթին գործի դնելով 1,500 դազգահ և 20,000 ճախարակ: Այդ նպատակին յատկացուեց 6,691,200 բուբլի:

Հոկտ. 11-ի օրէնքով, «բոլոր գաղթական որբերի խնամատարութեան ու դաստիարակութեան գործը պետութիւնը վերցրեց իր վրա և անմիջական վարումը յանձնեց հանրային խնամատարութեան նախարարին»: Ինքնավա-

*) Յետագային, դեկտ. 3-ին, Հայ. խորհուրդը պետականացուած բամբակի համար գին նշանակեց 49ռ. 50կ. փուդը: